Լրամշակված նախագիծ

Երկրորդ ընթերցում

Կ-463-06.12.2022-ՏԵ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ապրանքային նշանների մասին» 2010 թվականի ապրիլի 29-ի ՀՕ-59-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի.

1)1-ին մասի «դիսկլամացիա» հասկացությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«14. դիսկլամացիա՝ ապրանքային նշանի որևէ տարրի իրավական պահպանություն չտրամադրելու վերաբերյալ հայտարարություն.».

2) «միջազգային գրանցամատյան» հասկացությունից հետո լրացնել «ԵՏՄ պայմանագիր», «Միության ապրանքային նշան», «Միության ապրանքային նշանի հայտ» և «Միության գրանցամատյան» հասկացությունները հետևյալ բովանդակությամբ.

«ԵՏՄ պայմանագիր՝ Եվրասիական տնտեսական միության (այսուհետ՝ Միություն) ապրանքային նշանների, սպասարկման նշանների և ապրանքների ծագման տեղանունների մասին պայմանագիր.

Միության ապրանքային նշան՝ Միության ապրանքային նշան, որը Միության անդամ բոլոր երկրներում միաժամանակ պահպանվող նիշ է և ծառայում է ապրանքների, աշխատանքների (այսուհետ՝ ապրանքներ) և (կամ) ծառայությունների անհատականացման համար.

Միության ապրանքային նշանի հայտ՝ Միության ապրանքային նշանը գրանցելու հայտ, որը Միության ապրանքային նշանը գրանցելու համար անհրաժեշտ տեղեկություններ պարունակող փաստաթուղթ է.

Միության ապրանքային նշանների միասնական գրանցամատյան՝ Միության ապրանքային նշանների, սպասարկման նշանների վերաբերյալ տեղեկությունների ամբողջություն, որը կազմված է ազգային բաժիններից (ըստ անդամ պետությունների) և տեղադրվում է Միության պաշտոնական կայքում՝ «Ինտերնետ» տեղեկատվական-հեռահաղորդակցական ցանցում.

Հոդված 2. Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետից հետո լրացնել նոր 2.1 կետ հետևյալ բովանդակությամբ.

«2.1) ԵՏՄ պայմանագրի համաձայն Միության ապրանքային նշանների հայտերի ընդունում, փորձաքննության անցկացում, Միության ապրանքային նշանի գրանցում Միության ապրանքային նշանների միասնական գրանցամատյանում, Միության ապրանքային նշանի վկայագրի տրամադրում և Միության ապրանքային նշանի գրանցման ու իրավական պահպանության հետ կապված այլ գործառույթների իրականացում.»:

Հոդված 3. Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել նոր 4) կետով հետևյալ բովանդակությամբ.

«4) ԵՏՄ պայմանագրով սահմանված կարգով դրա գրանցման հիման վրա:»

Հոդված 4. Օրենքի 9-րդ հոդվածի.

1) 1-ին մասի 7-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

7) բաղկացած է կամ պարունակում է կեղծ և (կամ) սպառողներին մոլորության մեջ գցող տվյալներ՝ ապրանքի արտադրության կամ ծառայության մատուցման ժամանակի, ապրանքի կամ ծառայության տեսակի, բնույթի, որակի, քանակի, ստեղծման նպատակի, արժեքի, աշխարհագրական ծագման կամ ապրանքն արտադրողի (ծառայություն մատուցողի) վերաբերյալ հարցերում»:

2) 1-ին մասի 12-րդ կետը ուժը կորցրած ճանաչել.

3) 1-ին մասի 13-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«13) բաղկացած կամ պարունակում է՝

ա) գինիների կամ այլ ալկոհոլային խմիչքների նույնականացման համար նախատեսված աշխարհագրական նշում, պայմանով, որ ապրանքային նշանի գրանցման հայտը ներկայացվում է ավելի ուշ, քան աշխարհագրական նշման կամ ծագման տեղանվան գրանցման հայտը այն դեպքերում, երբ ապրանքները չեն ծագել տվյալ աշխարհագրական վայրից, նույնիսկ, եթե նշվում է ապրանքների իրական ծագումը, կամ աշխարհագրական նշումն օգտագործվում է թարգմանաբար կամ «տեսակ», «տիպ», «ոճ», «նմանակում» և այլ նման արտահայտությունների զուգակցմամբ.». կամ

բ) նշում, որը նույնական կամ շփոթելու աստիճան նման է Հայաստանի Հանրապետության տարածքում պահպանվող աշխարհագրական նշմանը, ծագման տեղանվանը կամ երաշխավորված ավանդական արտադրանքին այն դեպքերում, երբ ապրանքները չեն ծագել տվյալ աշխարհագրական վայրից, նույնիսկ, եթե նշվում է ապրանքների իրական ծագումը, կամ աշխարհագրական նշումն օգտագործվում է թարգմանաբար կամ «տեսակ», «տիպ», «ոճ», «նմանակում» և այլ նման արտահայտությունների զուգակցմամբ.».

4) 2-րդ մասի «2-4-րդ կետերը» բառերը փոխարինել «2-5-րդ կետերը» բառերով.

5) 2-րդ մասից հետո լրացնել նոր 2.1 մասով հետևյալ բովանդակությամբ.

«2.1. Սույն հոդվածի 1-ին մասի 2-5-րդ կետերում նշված նիշերը կարող են ներառվել ապրանքային նշանի մեջ որպես չպահպանվող տարրեր, եթե դրանք նշանում գերիշխող մաս չեն զբաղեցնում:».

6) 3.1-րդ մասից հետո լրացնել նոր 3.2-րդ մասով հետևյալ բովանդակությամբ.

«3.2. Սույն հոդվածի 1-ին մասի 11-րդ կետում նշված նիշերը կարող են ներառվել ապրանքային նշանի մեջ որպես չպահպանվող տարրեր, եթե դրանք նշանում գերիշխող մաս չեն զբաղեցնում և եթե առկա է համապատասխան թույլտվություն՝ տրված իրավասու մարմնի կամ անձի կողմից:»:

Հոդված 5. Օրենքի 10-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի 1-ին կետում «որը գրանցված է» բառերից հետո լրացնել՝ «(Հայաստանի Հանրապետությունում իրավական պահպանություն է տրամադրված)» բառերով:

2) 1-ին մասի 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) որը նույնական կամ շփոթելու աստիճան նման է ավելի վաղ ապրանքային նշանին և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույն կամ նույնատիպ լինելը սպառողների մոտ շփոթություն առաջացնելու հավանականություն է պարունակում.».

3) 1-ին մասի 3-րդ կետում «որոնք նույնատիպ չեն այն ապրանքներին և (կամ) ծառայություններին» բառերը փոխարինել «որոնք նույնը կամ նույնատիպ չեն այն ապրանքներին և (կամ) ծառայություններին» բառերով:

4) 1-ին մասի 3-րդ կետում «նման» բառից առաջ լրացնել «շփոթելու աստիճան» բառերը:

5) 1-ին մասի 4-րդ և 7-րդ կետերում, Օրենքի 51-րդ հոդվածի 3-րդ մասում «առաջնության թվականը» բառերը փոխարինել «խնդրարկված առաջնության դեպքում՝ առաջնության թվականը» բառերով.

6) 1-ին մասի 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

5) նույնական կամ նման է Հայաստանի Հանրապետությունում պահպանվող աշխարհագրական նշմանը, ծագման տեղանվանը կամ երաշխավորված ավանդական արտադրանքին, և գրանցման է ներկայացվել այնպիսի ապրանքների համար, որոնք նույնական կամ նույնատիպ են այն ապրանքներին, որոնց համար գրանցված է (պահպանվում է) աշխարհագրական նշումը, ծագման տեղանունը կամ երաշխավորված ավանդական արտադրանքը, բացառությամբ այն դեպքի, երբ գրանցման ներկայացված ապրանքային նշանում դրանք ներառված են որպես չպահպանվող տարրեր, և հայտը ներկայացված է աշխարհագրական նշման, ապրանքի ծագման տեղանվան կամ երաշխավորված ավանդական արտադրանքի օգտագործման իրավունք ունեցող անձի կողմից: Այլ ապրանքների համար ներկայացված այդպիսի ապրանքային նշանը ենթակա չէ գրանցման, եթե հայտարկված ապրանքային նշանի օգտագործումն անհիմն առավելությունների կհանգեցնի գրանցված աշխարհագրական նշման, ծագման տեղանվան կամ երաշխավորված ավանդական արտադրանքի բարի համբավի շնորհիվ.».

7) 2-րդ մասի 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) սույն մասի 1-ին կետում նշված իրավական պահպանություն ստանալու համար հայտարկված ապրանքային նշաններ՝ հետագայում դրանց իրավական պահպանություն տրամադրելու պայմանով.»:

Հոդված 6. Օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Եթե հայտարկված ապրանքային նշանը պարունակում է սույն հոդվածի 1-ին մասում նշված տարրեր, և եթե հիմնավոր պատճառներ կան ենթադրելու, որ այդ տարրերը կարող են ազդել ապրանքային նշանի գրանցման վավերականության վրա, ապա հայտատուի խնդրանքով (իր դիմումի համաձայն) կամ սույն օրենքով նախատեսված դեպքերում՝ պետական լիազոր մարմնի որոշմամբ այդ տարրերը կարող են ճանաչվել դիսկլամացված, որոնք ներառված լինելով ապրանքային նշանի մեջ, ինքնուրույն իրավական պահպանություն չեն ստանում:»:

Հոդված 7. Օրենքի 12-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի 2-րդ կետում և 3-րդ մասի 1-ին կետում, Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետում, Օրենքի 26-րդ հոդվածի 6-րդ մասում, Օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասում և Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում «հանրության» բառը համապատասխան հոլովաձևերով փոխարինել «սպառող» բառով համապատասխան հոլովաձևերով:

2) 1-ին մասի 2-րդ կետում «որոնք նույնական կամ նույնատիպ են այն ապրանքներին և (կամ) ծառայություններին» բառերը փոխարինել «որոնք նույնը կամ նույնատիպ են այն ապրանքներին և (կամ) ծառայություններին» բառերով:

3) 2-րդ մասի 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5) «նույնական կամ նման նիշի օգտագործումը համացանցում (ինտերնետում), ինտերնետային կայքերի դոմենային անվանումներում, նույնիսկ եթե տվյալ դոմենային անվանման ներքո գործող կայքը ակտիվ չէ կամ որևէ տեղեկատվություն չի պարունակում.».

4) 4-րդ մասում «կատարված գրառման հրապարակման թվականից» բառերից հետո լրացնել «կամ Միության ապրանքային նշանների միասնական գրանցամատյանում այն գրանցելու թվականից» բառերը:

Հոդված 8. Օրենքի 14-րդ հոդվածի՝

1) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1. Ապրանքային նշանի նկատմամբ բացառիկ իրավունքի խախտում չի համարվում տվյալ ապրանքային նշանը կրող կամ դրանով մակնշված այն ապրանքների իրացումը (ապրանքային նշանի օգտագործումը), որոնք ապրանքային նշանի իրավատիրոջ կողմից կամ նրա համաձայնությամբ տնտեսական շրջանառության մեջ են դրվել Հայաստանի Հանրապետությունում կամ այլ երկրում, որի հետ գործում է ընդհանուր շուկայի կամ ընդհանուր մաքսային սահմանի մասին միջազգային պայմանագիր:».

2) 2-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

3) 3-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 9. Օրենքի 17-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1) դրա կիրառումն այն ծառայության մատուցման վայրում (ներառյալ կայքէջում՝ վիրտուալ ծառայության դեպքում) և (կամ) զետեղումն այն ապրանքի և (կամ) դրա փաթեթավորման վրա, որի համար գրանցված է տվյալ ապրանքային նշանը.

2) 1-ին մասի 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) դրա կիրառումը ապրանքի արտադրության և (կամ) իրացման կամ ծառայության մատուցման հետ կապված գովազդներում, հրատարակություններում, պաշտոնական ձևաթղթերում, ցուցանակներում միայն այն դեպքերում, երբ այդ ապրանքի կամ դրա փաթեթավորման վրա կամ ծառայության մատուցման վայրի մուտքի մոտ նշանի կիրառումն անհնար է.»:

3) 1-ին մասի 3-րդ կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

«3) ապրանքային նշանի օգտագործումն այնպիսի ձևով, որը տարբերվում է գրանցվածից՝ միայն դրա տարբերակիչ բնույթը չփոփոխող առանձին ոչ էական տարրերով:».

4) 2-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«2. Ապրանքային նշանի գրանցումը կարող է իրավական շահագրգռվածություն ունեցող անձի կողմից դատարան ներկայացված հայցի կամ հակընդդեմ հայցի քննարկման արդյունքում կայացված դատարանի վճռի հիման վրա չեղյալ ճանաչվել բոլոր ապրանքների և (կամ) ծառայությունների նկատմամբ, որոնց համար այն գրանցված է, կամ դրանց մի մասի նկատմամբ, եթե ապրանքային նշանի գրանցման թվականից հաշված՝ երեք տարի անընդմեջ, կամ դատարան ներկայացված համապատասխան հայցը (հակընդդեմ հայցը) ավելի ուշ ներկայացնելու դեպքում՝ դրան անմիջականորեն նախորդող երեք տարի անընդմեջ ժամանակահատվածում ապրանքային նշանն ընդհանրապես չի օգտագործվել, իսկ օգտագործման դեպքում իրական օգտագործման մեջ չի դրվել Հայաստանի Հանրապետությունում ապրանքային նշանի իրավատիրոջ կամ սույն օրենքի համաձայն՝ այդ իրավունքն ունեցող անձի կողմից՝ այն ապրանքների կամ ծառայությունների համար, որոնց նկատմամբ չեղյալ կամ մասնակի չեղյալ ճանաչման հայց կամ հակընդդեմ հայց է ներկայացվել: Ապրանքային նշանի օգտագործման փաստի ապացուցման բեռը կրում է ապրանքային նշանի իրավատերը կամ սույն օրենքի համաձայն՝ տվյալ ապրանքային նշանի օգտագործման իրավունք ունեցող անձը:»:

5) 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Ապրանքային նշանի գրանցումը չեղյալ ճանաչելու դատարան ներկայացված համապատասխան հայցը (հակընդդեմ հայցը) չի կարող բավարարվել, եթե մինչև համապատասխան հայցը կամ հակընդդեմ հայցը ներկայացնելը Հայաստանի Հանրապետությունում սկսվել կամ վերականգնվել է տվյալ ապրանքային նշանի իրական օգտագործումը: Ընդ որում, եթե ապրանքային նշանի իրական օգտագործման սկիզբը կամ վերականգնումը տեղի է ունեցել ապրանքային նշանի գրանցումը չեղյալ ճանաչելու մասին դատարան ներկայացված համապատասխան հայցի (հակընդդեմ հայցի) ներկայացման օրվան նախորդող եռամսյա ժամկետում, ապա օգտագործումը հաշվի չի առնվում, եթե ապրանքային նշանի իրական օգտագործումը սկսվել կամ վերականգնվել է միայն այն բանից հետո, երբ ապրանքային նշանի իրավատիրոջը հայտնի է դարձել կամ կարող էր հայտնի դառնալ ապրանքային նշանի գրանցումը չեղյալ ճանաչելու մասին դատարան հայց (հակընդդեմ հայց) ներկայացնելու հավանականության մասին:».

6) 5-րդ մասի 1-ին կետում «փաստարկներ» բառը փոխարինել «ապացույցներ» բառով.

7) 5-րդ մասի 2-րդ կետում «առանձին» բառից հետո լրացնել «ոչ էական» բառերը.

8) 5-րդ մասի 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) Բացառապես արտահանման նպատակով Հայաստանի Հանրապետությունում ապրանքային նշանը զետեղվել է այն ապրանքների և (կամ) դրանց փաթեթավորումների վրա, որոնց համար գրանցված է տվյալ ապրանքային նշանը.».

Հոդված 10. Օրենքի 19-րդ հոդվածի՝

1) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1. Ապրանքային նշանի գրանցման գործողության ժամկետը կարող է բազմակի երկարաձգվել բոլոր ապրանքների և (կամ) ծառայությունների կամ դրանց մի մասի նկատմամբ (որոնց համար գրանցված է)՝ յուրաքանչյուր անգամ տասը տարի ժամկետով:».

2) 7-րդ մասում «ձևակերպման» բառից հետո լրացնել «, լրացման, ներկայացման» բառերը:

Հոդված 11. Օրենքի 21-րդ հոդվածի՝

1) վերնագրում և ամբողջ հոդվածում «հայտարարումը» բառը փոխարինել «ճանաչումը» բառով՝ համապատասխան հոլովաձևերով.

2) 1-ին մասի 1-ին կետում «հաշված՝ հինգ տարի» բառերը փոխարինել «հաշված՝ երեք տարի» բառերով, իսկ «նախորդող հինգ տարի» բառերը՝ «նախորդող երեք տարի» բառերով:

3) 1-ին մասի 3-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

«3) ապրանքային նշանի իրավատիրոջ կողմից անմիջականորեն կամ նրա համաձայնությամբ ապրանքների կամ ծառայությունների նկատմամբ ապրանքային նշանի օգտագործումը կարող է սպառողին մոլորության մեջ գցել, մասնավորապես այն ապրանքների և (կամ) ծառայությունների տեսակի հարցում, որի համար այն գրանցված է, կամ ապրանքների և (կամ) ծառայությունների որակի, աշխարհագրական ծագման, կամ ապրանքն արտադրողի (ծառայություն մատուցողի) հարցերում:».

4) 3-րդ մասում «ուժով» բառը փոխարինել «հիման վրա» բառերով.

Հոդված 12. Օրենքի 26-րդ հոդվածի՝

1) 1-ին մասում «իրավատիրոջ» և «իրավատեր» բառերից հետո լրացնել համապատասխանաբար «(հայտատուի)» և «(հայտատու)» բառերը.

2) 6-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6. Պետական լիազոր մարմինը մերժում է իրավունքների փոխանցման գրանցումը, եթե ակնհայտ է, որ փոխանցման հետևանքով ապրանքային նշանի օգտագործումը կարող է հանրությանը մոլորության մեջ գցել, մասնավորապես այն ապրանքների և (կամ) ծառայությունների բնույթի, տեսակի, որակի, աշխարհագրական ծագման, ապրանքն արտադրողի (ծառայություն մատուցողի) վերաբերյալ, որոնց համար գրանցված է ապրանքային նշանը, բացառությամբ, եթե իրավունքներն ստացող կողմը համաձայնում է սահմանափակել ապրանքային նշանի գրանցումն այն ապրանքներով և (կամ) ծառայություններով, որոնց համար մոլորության մեջ գցելու վտանգը բացակայում է»:

3) 9-րդ մասից հետո լրացնել նոր 10-րդ մասով հետևյալ բովանդակությամբ՝ «10. Սույն հոդվածում նշված դիմումի ձևը, դրա լրացման, ներկայացման և քննարկման կարգը սահմանում է կառավարությունը:»:

Հոդված 13. Օրենքի 40-րդ հոդվածի՝

1) 1-ին և 5-րդ մասերում «եղանակով» բառը փոխարինել «համակարգի միջոցով» բառերով, իսկ 1-ին մասում «իր ներկայացուցչի միջոցով» բառերից հետո լրացնել «՝ նրան տրված լիազորագրի հիման վրա» բառերը.

2) 1-ին մասից հետո լրացնել նոր 1.1 մասով հետևյալ բովանդակությամբ.

«1.1. Ներկայացուցչի լիազորագիրը պետական լիազոր մարմին ներկայացվում է հայտը ներկայացնելիս կամ այն ներկայացնելուց հետո՝ երկու ամսվա ընթացքում: Մինչև լիազորագիր ներկայացնելը ներկայացուցչի կատարած գործողությունները համարվում են չկատարված և հաշվի չեն առնվում, բացառությամբ հայտը և հայտին կցված փաստաթղթերը պետական լիազոր մարմին ներկայացնելու և պետական տուրք վճարելու գործողությունների: Նշված ժամկետում լիազորագիրը չներկայացվելու դեպքում պետական լիազոր մարմինը ծանուցագիր է ուղարկում ներկայացուցչին՝ այն ստանալու օրվանից երկամսյա ժամկետում լիազորագիր ներկայացնելու առաջարկությամբ: Նշված ժամկետում լիազորագիրը չներկայացվելու դեպքում գործավարությունն իրականացվում է հայտատուի հետ անմիջականորեն՝ հաշվի առնելով սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները:»:

3) 2-րդ մասում «այլ ներկայացուցչի միջոցով» բառերից առաջ լրացնել «Հայաստանի Հանրապետությունում հաշվառված և մշտապես բնակվող կամ գործունեության վայր ունեցող» բառերով, «այլ ներկայացուցչի միջոցով» բառերից հետո լրացնել «,եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով այլ բան նախատեսված չէ» բառերը.

4) 2-րդ մասից հետո լրացնել նոր 2.1 մասով հետևյալ բովանդակությամբ.

«2.1. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերում և սույն հոդվածի 1.1 մասով սահմանված ժամկետում արտոնագրային հավատարմատարի կամ այլ ներկայացուցչի լիազորագիրը չներկայացնելու դեպքում պետական լիազոր մարմինը ծանուցագիր է ուղարկում արտոնագրային հավատարմատարին կամ այլ ներկայացուցչին՝ այն ստանալու օրվանից երկամսյա ժամկետում լիազորագիր ներկայացնելու առաջարկությամբ: Նշված ժամկետում լիազորագիրը չներկայացվելու դեպքում հայտը համարվում է հետ կանչված, ինչի մասին հայտատուն ծանուցվում է:».

5) 5-րդ մասում «և ներկայացման» բառերը փոխարինել «, ներկայացման և քննարկման» բառերով:

6) 6-րդ մասի 2-րդ կետում «փաստաթուղթը» բառից հետո լրացնել (լիազորագիրը)» բառը:

Հոդված 14. Օրենքի 43-րդ հոդված 7-րդ մասում 1-ին նախադասության մեջ «և հայտում» բառերը փոխարինել «և չեն ընդլայնում հայտում» բառերով, իսկ 2-րդ նախադասության մեջ «հայտում նշված ապրանքների և (կամ) ծառայությունների ցանկը ոչ նույնատիպ ապրանքներով և (կամ) ծառայություններով համալրելու անհրաժեշտություն են առաջացնում:» բառերը փոխարինել «ընդլայնում են հայտում նշված ապրանքների և (կամ) ծառայությունների ցանկը:» բառերով:

Հոդված 15. Օրենքի 45-րդ հոդվածում՝

1) 5-րդ մասից հետո լրացնել նոր 5.1-րդ և 5.2-րդ մասերով հետևյալ բովանդակությամբ.

«5.1. Եթե փորձաքննության ընթացքում պարզվում է, որ նույնական կամ սպառողների մոտ շփոթություն առաջացնելու հավանականություն պարունակող ապրանքային նշաններն ունեն նույն առաջնության թվականը, ապա պետական լիազոր մարմինն այդ մասին ծանուցում է հայտատուներին: Ծանուցագիրը ստանալու օրվանից հետո երեք ամսվա ընթացքում հայտատուները կարող են պետական լիազոր մարմին ներկայացնել իրենց դիրքորոշումը կամ հայտարկված ապրանքային նշանների հետ կապված հայտատուների միջև հարաբերությունները կարգավորող և սպառողների մոտ շփոթություն առաջացնելու վտանգը կանխող համաձայնագիր:

5.2. Սույն հոդվածի 5.1. մասի համաձայն՝ սահմանված ժամկետում հայտատուների կողմից ներկայացված դիրքորոշումները և (կամ) համաձայնագիրը պետական լիազոր մարմինն ըստ էության քննարկում է սույն հոդվածով նախատեսված ապրանքային նշանի փարձաքննության անցկացման կարգով սահմանված պահանջներին համապատասխան:»

2) 7-րդ մասում հանել «տարբերակիչ հատկություն չունեն և» բառերը, իսկ «կասկածներ առաջացնել ապրանքային նշանի պահպանության ծավալի վերաբերյալ» բառերը փոխարինել «ազդել ապրանքային նշանի գրանցման վավերականության վրա» բառերով.

3) 8-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«8. Եթե սույն հոդվածի 7-րդ մասի համաձայն սահմանված ժամկետում հայտատուն հայտարարություն չի ներկայացնում նշված տարրերից հրաժարվելու մասին, ապա՝

1) պետական լիազոր մարմինը համարում է, որ հայտատուն համաձայն է ներկայացված հիմքերի հետ և մերժման այլ հիմքերի բացակայության դեպքում որոշում է կայացնում հայտում նշված բոլոր ապրանքների և (կամ) ծառայությունների համար ապրանքային նշանը գրանցելու մասին՝ նշում կատարելով նշված տարրերին ինքնուրույն պահպանություն չտրամադրելու մասին. կամ

2) պետական լիազոր մարմինը համարում է, որ հայտատուն համաձայն է ներկայացված հիմքերի հետ և հայտարկված ապրանքային նշանը ենթակա չէ գրանցման հայտում նշված ապրանքների և (կամ) ծառայությունների մի մասի համար, իսկ ապրանքների և (կամ) ծառայությունների մյուս մասի համար, մերժման այլ հիմքերի բացակայության դեպքում, որոշում է կայացնում հայտում նշված բոլոր ապրանքների և (կամ) ծառայությունների համար ապրանքային նշանը գրանցելու մասին՝ նշում կատարելով նշված տարրերին ինքնուրույն պահպանություն չտրամադրելու մասին:

4) 8-րդ մասից հետո լրացնել նոր 8.1 մասով հետևյալ բովանդակությամբ.

«8.1. Եթե սույն հոդվածի 7-րդ մասի համաձայն սահմանված ժամկետում հայտատուն հայտարարություն է ներկայացնում միայն նշված տարրերից մի մասի նկատմամբ, կամ հայտարարություն է ներկայացնում նշված տարրերից մի մասի նկատմամբ, իսկ մյուս մասի նկատմամբ ներկայացնում է

պետական լիազոր մարմնի համար անընդունելի առարկություն, կամ նշված բոլոր տարրերի կամ դրանց մի մասի նկատմամբ ներկայացնում է պետական լիազոր մարմնի համար անընդունելի առարկություն, ապա պետական լիազոր մարմինը, մերժման այլ հիմքերի բացակայության դեպքում, որոշում է կայացնում ապրանքային նշանը մասնակի գրանցելու մասին՝ նշում կատարելով նշված տարրերին ինքնուրույն պահպանություն չտրամադրելու մասին:».

5) 12-րդ մասից հետո լրացնել նոր 12.1 մասով հետևյալ բովանդակությամբ.

«12.1. Հայտի ըստ էության փորձաքննության, կրկնական փորձաքննության վարչական վարույթները կարող են կասեցվել, հայտատուի դիմումի հիման վրա, եթե մերժման հիմք հանդիսացող մեկ այլ մտավոր սեփականության օբյեկտի նկատմամբ իրավունքների վիճարկման դիմում կամ հայց է ներկայացվել համապատասխան իրավասու պետական կամ դատական մարմին՝ մինչև տվյալ վարչական վարույթով կամ դատական գործով վերջնական որոշման կամ դատական ակտն ուժի մեջ մտնելը: Դիմումի քննարկումը վերսկսվում է դրա կասեցման հիմքերի վերանալուց հետո:».

6) 13-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«13. Ապրանքային նշանի գրանցումը չի կարող մերժվել առանց հայտատուին հնարավորություն ընձեռելու հետ կանչել կամ փոփոխություններ կատարել հայտի մեջ կամ փաստարկներ ներկայացնել ապրանքային նշանի գրանցման օգտին, ինչի մասին պետական լիազոր մարմինը ծանուցում է հայտատուին: Ծանուցումը ստանալու օրվանից երկամսյա ժամկետում հայտատուն կարող է հետ կանչել կամ փոփոխություններ կատարել հայտի մեջ կամ փաստարկներ ներկայացնել ապրանքային նշանի գրանցման օգտին: Ծանուցման պատասխանը պետական լիազոր մարմինը քննարկում է այն ստանալու օրվանից երկամսյա ժամկետում: Ծանուցման պատասխան չստանալու կամ ժամկետին չստանալու դեպքում, պետական լիազոր մարմինը որոշում է կայացնում ապրանքային նշանի գրանցումը մերժելու կամ մասնակի գրանցելու մասին:»:

Հոդված 16. Օրենքի 47-րդ հոդվածի՝

1) 3-րդ մասի 2-րդ կետի «:» նշանը փոխարինել «կամ» բառով և նույն մասը լրացնել նոր 3) ենթակետով հետևյալ խմբագրությամբ.

«3) «ապրանքային նշանի հայտով գործավարությունը շարունակելու մասին:»

2) 5-րդ մասում «վեցամսյա» բառը փոխարինել «երկամսյա» բառով:

3) 5-րդ մասից հետո լրացնել նոր 6-րդ մասով հետևյալ բովանդակությամբ.

«6. Բողոքարկման խորհրդում ապրանքային նշանի գրանցումը մերժելու կամ մասնակի գրանցելու մասին որոշման դեմ բողոքի քննարկման վարչական վարույթը կարող է կասեցվել, հայտատուի դիմումի հիման վրա, եթե մերժման հիմք հանդիսացող մեկ այլ մտավոր սեփականության օբյեկտի նկատմամբ իրավունքների վիճարկման դիմում կամ հայց է ներկայացվել համապատասխան իրավասու պետական կամ դատական մարմին՝ մինչև տվյալ վարչական վարույթով կամ դատական գործով վերջնական որոշման կամ դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելը: Բողոքի քննարկումը վերսկսվում է դրա կասեցման հիմքերի վերանալուց հետո:»:

Հոդված 17. Օրենքի 51-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի 1-ին կետում «գրանցումը մերժելու» բառերը փոխարինել «գրանցումը հայտում նշված բոլոր ապրանքների և (կամ) ծառայությունների կամ դրանց մի մասի համար մերժելու» բառերով.

2) 1-ին մասի 2-րդ կետում «գրանցման» բառը փոխարինել «գրանցումը հայտում նշված բոլոր ապրանքների և (կամ) ծառայությունների կամ դրանց մի մասի համար մերժելու» բառերով:

Հոդված 18. Օրենքի 52-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի 1-ին կետում «ազգանվան» բառից հետո լրացնել «, կամ անվանման» բառերը.

2) 2-րդ մասում լրացնել նոր նախադասություն հետևյալ բովանդակությամբ. «Սույն մասով սահմանված դրույթը չի կիրառվում սույն հոդվածի 1-ի մասի 2-րդ կետով նախատեսված հայտատուի ներկայացուցչի փոփոխության նկատմամբ:».

3) 2-րդ մասից հետո լրացնել նոր 2.1-րդ մասով հետևյալ բովանդակությամբ.

«2.1. Ներկայացուցչի փոփոխություն չի համարվում հայտի քննարկմանը կամ գրանցմանը վերաբերող առանձին գործողություն կատարելու համար հայտատուի կամ իրավատիրոջ կողմից տրված լիազորագրով այլ ներկայացուցիչների (ներկայացուցչի) նշանակումը:».

4) 8-րդ մասից հետո լրացնել նոր 9-րդ մասով հետևյալ բովանդակությամբ.

«9. Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված փոփոխությունների մասին պետական լիազոր մարմնին չտեղեկացնելու դեպքում հետագայում ներկայացված հայտերի կամ դիմումների քննարկման ընթացքում հայտատուին կամ դիմումատուին ծանուցվում է ներկայացված հայտին կամ դիմումին առնչվող ապրանքային նշանների գրանցումներին վերաբերող՝ համապատասխան պետական գրանցամատյանում նման փոփոխությունների կատարման անհրաժեշտության մասին: Ծանուցման ստացման օրվանից երկամսյա ժամկետում անհրաժեշտ է ներկայացնել դիմում համապատասխան փոփոխություններ կատարելու համար: Նշված ժամկետում դիմում չներկայացնելու դեպքում ապրանքային նշանի գրանցումը մերժվում է կամ դիմումները համարվում են հետ կանչված:»:

Հոդված 19. Օրենքի 55-րդ հոդվածի 4-րդ մասում «43-րդ հոդվածի 2-րդ մասով,» բառերից հետո լրացնել «45-րդ հոդվածի 13-րդ մասով,» բառերը:

Հոդված 20. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից երեք ամիս հետո:

Հոդված 21.

1. Սույն օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով Օրենքի 17-րդ հոդվածի նոր խմբագրությամբ շարադրվող 2-րդ մասով սահմանված ապրանքային նշանի չօգտագործման կամ իրական օգտագործման մեջ չդրվելու երեք տարվա ժամանակահատվածը տարածվում է նաև մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը ապրանքային նշանների պետական գրանցումների վրա:

2. Սույն օրենքի 18-րդ հոդվածի 4-րդ կետը տարածվում է նաև մինչև սույն օրենքը ուժի մեջ մտնելը գրասենյակ ներկայացված հայտերի կամ դիմումների վրա, որոնցով գործավարությունը ավարտված չէ:

3. Սույն օրենքի ընդունումից հետո՝ վեց ամսվա ընթացքում, Կառավարությունն ընդունում է սույն օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված կարգը:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՒ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ «ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ապրանքային նշանների մասին» 2010 թվականի ապրիլի 29-ի ՀՕ-59-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի.

2) 1-ին մասի «դիսկլամացիա» հասկացությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«14. դիսկլամացիա՝ ապրանքային նշանի որևէ տարրի իրավական պահպանություն չտրամադրելու վերաբերյալ հայտարարություն.».

2) «միջազգային գրանցամատյան» հասկացությունից հետո լրացնել «ԵՏՄ պայմանագիր», «Միության ապրանքային նշան», «Միության ապրանքային նշանի հայտ» և «Միության գրանցամատյան» հասկացությունները հետևյալ բովանդակությամբ.

«ԵՏՄ պայմանագիր՝ Եվրասիական տնտեսական միության (այսուհետ՝ Միություն) ապրանքային նշանների, սպասարկման նշանների և ապրանքների ծագման տեղանունների մասին պայմանագիր.

Միության ապրանքային նշան՝ Միության ապրանքային նշան, որը Միության անդամ բոլոր երկրներում միաժամանակ պահպանվող նիշ է և ծառայում է ապրանքների, աշխատանքների (այսուհետ՝ ապրանքներ) և (կամ) ծառայությունների ~~(այսուհետ՝ ապրանքներ)~~ անհատականացման համար.

Միության ապրանքային նշանի հայտ՝ Միության ապրանքային նշանը գրանցելու հայտ, որը Միության ապրանքային նշանը գրանցելու համար անհրաժեշտ տեղեկություններ պարունակող փաստաթուղթ է.

Միության ապրանքային նշանների միասնական գրանցամատյան՝ Միության ապրանքային նշանների, սպասարկման նշանների վերաբերյալ տեղեկությունների ամբողջություն, որը կազմված է ազգային բաժիններից (ըստ անդամ պետությունների) և տեղադրվում է Միության պաշտոնական կայքում՝ «Ինտերնետ» տեղեկատվական-հեռահաղորդակցական ցանցում.

Հոդված 2. Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետից հետո լրացնել նոր 2.1 կետ հետևյալ բովանդակությամբ.

«2.1) ԵՏՄ պայմանագրի համաձայն Միության ապրանքային նշանների հայտերի ընդունում, փորձաքննության անցկացում, Միության ապրանքային նշանի գրանցում Միության ապրանքային նշանների միասնական գրանցամատյանում, Միության ապրանքային նշանի վկայագրի տրամադրում և Միության ապրանքային նշանի գրանցման ու իրավական պահպանության հետ կապված այլ գործառույթների իրականացում.»:

Հոդված 3. Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել նոր 4) կետով հետևյալ բովանդակությամբ.

«4) ԵՏՄ պայմանագրով սահմանված կարգով դրա գրանցման հիման վրա:»

Հոդված 4. Օրենքի 9-րդ հոդվածի.

1) 1-ին մասի 7-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«~~7) բաղկացած է կամ պարունակում է կեղծ և(կամ) սպառողներին մոլորության մեջ գցող տվյալներ ապրանքի արտադրության կամ ծառայության մատուցման ժամանակի, ապրանքի կամ ծառայության տեսակի, որակի, քանակի, ստեղծման նպատակի, արժեքի, աշխարհագրական ծագման, ապրանքն արտադրողի (ծառայություն մատուցողի) կամ բնույթի վերաբերյալ հարցերում.»:~~

7) բաղկացած է կամ պարունակում է կեղծ և (կամ) սպառողներին մոլորության մեջ գցող տվյալներ՝ ապրանքի արտադրության կամ ծառայության մատուցման ժամանակի, ապրանքի կամ ծառայության տեսակի, բնույթի, որակի, քանակի, ստեղծման նպատակի, արժեքի, աշխարհագրական ծագման կամ ապրանքն արտադրողի (ծառայություն մատուցողի) վերաբերյալ հարցերում»:

2) 1-ին մասի 12-րդ կետը ուժը կորցրած ճանաչել.

3) 1-ին մասի 13-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

~~«13) բաղկացած է կամ պարունակում է՝~~

~~ա) գինիների կամ այլ ալկոհոլային խմիչքների նույնականացման համար նախատեսված Հայաստանի Հանրապետության տարածքում պահպանվող կամ Հայաստանի Հանրապետությունից դուրս օգտագործման մեջ գտնվող աշխարհագրական նշում, կամ~~

~~բ) նշում, որը նույնական կամ շփոթելու աստիճան նման է կամ վերարտադրում է, նմանակում կամ հիշեցնում է (օգնում է մտաբերել) Հայաստանի Հանրապետության տարածքում պահպանվող կամ Հայաստանի Հանրապետությունից դուրս օգտագործման մեջ գտնվող աշխարհագրական նշում, ծագման տեղանուն կամ երաշխավորված ավանդական արտադրանքի անվանում, այն դեպքերում, երբ ապրանքները չեն արտադրվել կամ ծառայությունները չեն մատուցվել տվյալ աշխարհագրական վայրից, նույնիսկ, եթե նշվում է ապրանքների արտադրման իրական ծագումը կամ ծառայությունների մատուցման վայրը, կամ աշխարհագրական նշումը, ծագման տեղանունը, երաշխավորված ավանդական արտադրանքի անվանումն օգտագործվում է թարգմանաբար, գրադարձված (տառադարձված) կամ «տեսակ», «տիպ», «ոճ», «նմանակում» և այլ նման արտահայտությունների զուգակցմամբ:~~

~~գ) սույն հոդվածի 1-ին մասի 13-րդ կետը չի տարածվում հայկական ծագման տեղանունների, ինչպես նաև հայկական ծագում ունեցող աշխարհագրական նշումների, երաշխավորված ավանդական արտադրանքի անվանումների և կոլեկտիվ նշանների նկատմամբ:».~~

«13) բաղկացած կամ պարունակում է՝

ա) գինիների կամ այլ ալկոհոլային խմիչքների նույնականացման համար նախատեսված աշխարհագրական նշում, պայմանով, որ ապրանքային նշանի գրանցման հայտը ներկայացվում է ավելի ուշ, քան աշխարհագրական նշման կամ ծագման տեղանվան գրանցման հայտը այն դեպքերում, երբ ապրանքները չեն ծագել տվյալ աշխարհագրական վայրից, նույնիսկ, եթե նշվում է ապրանքների իրական ծագումը, կամ աշխարհագրական նշումն օգտագործվում է թարգմանաբար կամ «տեսակ», «տիպ», «ոճ», «նմանակում» և այլ նման արտահայտությունների զուգակցմամբ.». կամ

բ) նշում, որը նույնական կամ շփոթելու աստիճան նման է Հայաստանի Հանրապետության տարածքում պահպանվող աշխարհագրական նշմանը, ծագման տեղանվանը կամ երաշխավորված ավանդական արտադրանքին այն դեպքերում, երբ ապրանքները չեն ծագել տվյալ աշխարհագրական

վայրից, նույնիսկ, եթե նշվում է ապրանքների իրական ծագումը, կամ աշխարհագրական նշումն օգտագործվում է թարգմանաբար կամ «տեսակ», «տիպ», «ոճ», «նմանակում» և այլ նման արտահայտությունների զուգակցմամբ.».

4) 2-րդ մասի «2-4-րդ կետերը» բառերը փոխարինել «2-5-րդ կետերը» բառերով.

5) 2-րդ մասից հետո լրացնել նոր 2.1 մասով հետևյալ բովանդակությամբ.

«2.1. Սույն հոդվածի 1-ին մասի 2-5-րդ կետերում նշված նիշերը կարող են ներառվել ապրանքային նշանի մեջ որպես չպահպանվող տարրեր, եթե դրանք նշանում գերիշխող մաս չեն զբաղեցնում:».

6) 3.1-րդ մասից հետո լրացնել նոր 3.2-րդ մասով հետևյալ բովանդակությամբ.

«3.2. Սույն հոդվածի 1-ին մասի 11-րդ կետում նշված նիշերը կարող են ներառվել ապրանքային նշանի մեջ որպես չպահպանվող տարրեր, եթե դրանք նշանում գերիշխող մաս չեն զբաղեցնում և եթե առկա է համապատասխան թույլտվություն՝ տրված իրավասու մարմնի կամ անձի կողմից:»:

Հոդված 5. Օրենքի 10-րդ հոդվածի՝

1) ~~1-ին մասի 1-ին կետում «որը գրանցված է» բառերը փոխարինել՝ «որը Հայաստանի Հանրապետությունում իրավական պահպանություն է ստացել» բառերով:~~

1-ին մասի 1-ին կետում «որը գրանցված է» բառերից հետո լրացնել՝ «(Հայաստանի Հանրապետությունում իրավական պահպանություն է տրամադրված)» բառերով:

2) 1-ին մասի 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) որը նույնական կամ շփոթելու աստիճան նման է ավելի վաղ ապրանքային նշանին և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույն կամ նույնատիպ լինելը սպառողների մոտ շփոթություն առաջացնելու հավանականություն է պարունակում.».

3) 1-ին մասի 3-րդ կետում «որոնք նույնատիպ չեն այն ապրանքներին և (կամ) ծառայություններին» բառերը փոխարինել «որոնք նույնը կամ նույնատիպ չեն այն ապրանքներին և (կամ) ծառայություններին» բառերով:

4) 1-ին մասի 3-րդ կետում «նման» բառից առաջ լրացնել «շփոթելու աստիճան» բառերը:

5) 1-ին մասի 4-րդ և 7-րդ կետերում, Օրենքի 51-րդ հոդվածի 3-րդ մասում «առաջնության թվականը» բառերը փոխարինել «խնդրարկված առաջնության դեպքում՝ առաջնության թվականը» բառերով.

6) 1-ին մասի 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

~~«5) նույնական կամ նման է Հայաստանի Հանրապետությունում պահպանվող և (կամ) Հայաստանի Հանրապետությունից դուրս օգտագործման մեջ գտնվող աշխարհագրական նշմանը, ծագման տեղանվանը կամ երաշխավորված ավանդական արտադրանքի անվանմանը, և գրանցման է ներկայացվել այնպիսի ապրանքների համար, որոնք նույնական կամ նույնատիպ են այն ապրանքներին, որոնց համար գրանցված է աշխարհագրական նշումը ծագման տեղանունը կամ երաշխավորված ավանդական արտադրանքը, և (կամ) հայտարկված ապրանքային նշանի օգտագործումը՝~~

~~ա) անհիմն առավելությունների կհանգեցնի տվյալ աշխարհագրական նշման, ծագման տեղանվան կամ երաշխավորված ավանդական արտադրանքի բարի համբավի շնորհիվ,~~

~~բ) կարող է մոլորեցնել սպառողներին, կամ~~

~~գ) կապ ենթադրել հայտարկված նշանի իրավատիրոջ և պահպանվող կամ օգտագործման մեջ գտնվող աշխարհագրական նշման, ծագման տեղանվան կամ երաշխավորված ավանդական~~

~~արտադրանքի արտադրողի միջև, բացառությամբ այն դեպքերի, երբ գրանցման ներկայացված ապրանքային նշանում դրանք ներառված են որպես չպահպանվող տարրեր, և հայտը ներկայացված է օգտագործման իրավունք ունեցող անձի կողմից.».~~

5) նույնական կամ նման է Հայաստանի Հանրապետությունում պահպանվող աշխարհագրական նշմանը, ծագման տեղանվանը կամ երաշխավորված ավանդական արտադրանքին, և գրանցման է ներկայացվել այնպիսի ապրանքների համար, որոնք նույնական կամ նույնատիպ են այն ապրանքներին, որոնց համար գրանցված է (պահպանվում է) աշխարհագրական նշումը, ծագման տեղանունը կամ երաշխավորված ավանդական արտադրանքը, բացառությամբ այն դեպքի, երբ գրանցման ներկայացված ապրանքային նշանում դրանք ներառված են որպես չպահպանվող տարրեր, և հայտը ներկայացված է աշխարհագրական նշման, ապրանքի ծագման տեղանվան կամ երաշխավորված ավանդական արտադրանքի օգտագործման իրավունք ունեցող անձի կողմից: Այլ ապրանքների համար ներկայացված այդպիսի ապրանքային նշանը ենթակա չէ գրանցման, եթե հայտարկված ապրանքային նշանի օգտագործումն անհիմն առավելությունների կհանգեցնի գրանցված աշխարհագրական նշման, ծագման տեղանվան կամ երաշխավորված ավանդական արտադրանքի բարի համբավի շնորհիվ.».

7) 2-րդ մասի 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) սույն մասի 1-ին կետում նշված իրավական պահպանություն ստանալու համար հայտարկված ապրանքային նշաններ՝ հետագայում դրանց իրավական պահպանություն տրամադրելու պայմանով.»:

Հոդված 6. Օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Եթե հայտարկված ապրանքային նշանը պարունակում է սույն հոդվածի 1-ին մասում նշված տարրեր, և եթե հիմնավոր պատճառներ կան ենթադրելու, որ այդ տարրերը կարող են ազդել ապրանքային նշանի գրանցման վավերականության վրա, ապա հայտատուի խնդրանքով (իր դիմումի համաձայն) կամ սույն օրենքով նախատեսված դեպքերում՝ պետական լիազոր մարմնի որոշմամբ այդ տարրերը կարող են ճանաչվել դիսկլամացված, որոնք ներառված լինելով ապրանքային նշանի մեջ, ինքնուրույն իրավական պահպանություն չեն ստանում:»:

Հոդված 7. Օրենքի 12-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի 2-րդ կետում և 3-րդ մասի 1-ին կետում, Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետում, Օրենքի 26-րդ հոդվածի 6-րդ մասում, Օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասում և Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում «հանրության» բառը համապատասխան հոլովաձևերով փոխարինել «սպառող» բառով համապատասխան հոլովաձևերով:

2) 1-ին մասի 2-րդ կետում «որոնք նույնական կամ նույնատիպ են այն ապրանքներին և (կամ) ծառայություններին» բառերը փոխարինել «որոնք նույնը կամ նույնատիպ են այն ապրանքներին և (կամ) ծառայություններին» բառերով:

3) 2-րդ մասի 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5) «նույնական կամ նման նիշի օգտագործումը համացանցում (ինտերնետում), ինտերնետային կայքերի դոմենային անվանումներում, նույնիսկ եթե տվյալ դոմենային անվանման ներքո գործող կայքը ակտիվ չէ կամ որևէ տեղեկատվություն չի պարունակում.».

4) 4-րդ մասում «կատարված գրառման հրապարակման թվականից» բառերից հետո լրացնել «կամ Միության ապրանքային նշանների միասնական գրանցամատյանում այն գրանցելու թվականից» բառերը:

Հոդված 8. Օրենքի 14-րդ հոդվածի՝

4) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1. Ապրանքային նշանի նկատմամբ բացառիկ իրավունքի խախտում չի համարվում տվյալ ապրանքային նշանը կրող կամ դրանով մակնշված այն ապրանքների իրացումը (ապրանքային նշանի օգտագործումը), որոնք ապրանքային նշանի իրավատիրոջ կողմից կամ նրա համաձայնությամբ տնտեսական շրջանառության մեջ են դրվել Հայաստանի Հանրապետությունում կամ այլ երկրում, որի հետ գործում է ընդհանուր շուկայի կամ ընդհանուր մաքսային սահմանի մասին միջազգային պայմանագիր:».

5) 2-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

6) 3-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 9. Օրենքի 17-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1) դրա կիրառումն այն ծառայության մատուցման վայրում (ներառյալ կայքէջում՝ վիրտուալ ծառայության դեպքում) և (կամ) զետեղումն այն ապրանքի և (կամ) դրա փաթեթավորման վրա, որի համար գրանցված է տվյալ ապրանքային նշանը.

2) 1-ին մասի 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) դրա կիրառումը ապրանքի արտադրության և (կամ) իրացման կամ ծառայության մատուցման հետ կապված գովազդներում, հրատարակություններում, պաշտոնական ձևաթղթերում, ցուցանակներում միայն այն դեպքերում, երբ այդ ապրանքի կամ դրա փաթեթավորման վրա կամ ծառայության մատուցման վայրի մուտքի մոտ նշանի կիրառումն անհնար է.»:

3) 1-ին մասի 3-րդ կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

«3) ապրանքային նշանի օգտագործումն այնպիսի ձևով, որը տարբերվում է գրանցվածից՝ միայն դրա տարբերակիչ բնույթը չփոփոխող առանձին ոչ էական տարրերով:».

4) 2-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«2. Ապրանքային նշանի գրանցումը կարող է իրավական շահագրգռվածություն ունեցող անձի կողմից դատարան ներկայացված հայցի կամ հակընդդեմ հայցի քննարկման արդյունքում կայացված դատարանի վճռի հիման վրա չեղյալ ճանաչվել բոլոր ապրանքների և (կամ) ծառայությունների նկատմամբ, որոնց համար այն գրանցված է, կամ դրանց մի մասի նկատմամբ, եթե ապրանքային նշանի գրանցման թվականից հաշված՝ երեք տարի անընդմեջ, կամ դատարան ներկայացված համապատասխան հայցը (հակընդդեմ հայցը) ավելի ուշ ներկայացնելու դեպքում՝ դրան անմիջականորեն նախորդող երեք տարի անընդմեջ ժամանակահատվածում ապրանքային նշանն ընդհանրապես չի օգտագործվել, իսկ օգտագործման դեպքում իրական օգտագործման մեջ չի դրվել Հայաստանի Հանրապետությունում ապրանքային նշանի իրավատիրոջ կամ սույն օրենքի համաձայն՝ այդ իրավունքն ունեցող անձի կողմից՝ այն ապրանքների կամ ծառայությունների համար, որոնց նկատմամբ չեղյալ կամ մասնակի չեղյալ ճանաչման հայց կամ հակընդդեմ հայց է ներկայացվել: Ապրանքային նշանի օգտագործման փաստի ապացուցման բեռը կրում է ապրանքային նշանի իրավատերը կամ սույն օրենքի համաձայն՝ տվյալ ապրանքային նշանի օգտագործման իրավունք ունեցող անձը:»:

5) 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Ապրանքային նշանի գրանցումը չեղյալ ճանաչելու դատարան ներկայացված համապատասխան հայցը (հակընդդեմ հայցը) չի կարող բավարարվել, եթե մինչև համապատասխան հայցը կամ հակընդդեմ հայցը ներկայացնելը Հայաստանի Հանրապետությունում սկսվել կամ վերականգնվել է տվյալ ապրանքային նշանի իրական օգտագործումը: Ընդ որում, եթե ապրանքային նշանի իրական օգտագործման սկիզբը կամ վերականգնումը տեղի է ունեցել ապրանքային նշանի գրանցումը չեղյալ ճանաչելու մասին դատարան ներկայացված համապատասխան հայցի (հակընդդեմ հայցի) ներկայացման օրվան նախորդող եռամսյա ժամկետում, ապա օգտագործումը հաշվի չի առնվում, եթե ապրանքային նշանի իրական օգտագործումը սկսվել կամ վերականգնվել է միայն այն բանից հետո, երբ ապրանքային նշանի իրավատիրոջը հայտնի է դարձել կամ կարող էր հայտնի դառնալ ապրանքային նշանի գրանցումը չեղյալ ճանաչելու մասին դատարան հայց (հակընդդեմ հայց) ներկայացնելու հավանականության մասին:».

6) 5-րդ մասի 1-ին կետում «փաստարկներ» բառը փոխարինել «ապացույցներ» բառով.

7) 5-րդ մասի 2-րդ կետում «առանձին» բառից հետո լրացնել «ոչ էական» բառերը.

8) 5-րդ մասի 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) Բացառապես արտահանման նպատակով Հայաստանի Հանրապետությունում ապրանքային նշանը զետեղվել է այն ապրանքների և (կամ) դրանց փաթեթավորումների վրա, որոնց համար գրանցված է տվյալ ապրանքային նշանը.».

Հոդված 10. Օրենքի 19-րդ հոդվածի՝

1) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1. Ապրանքային նշանի գրանցման գործողության ժամկետը կարող է բազմակի երկարաձգվել բոլոր ապրանքների և (կամ) ծառայությունների կամ դրանց մի մասի նկատմամբ (որոնց համար գրանցված է)՝ յուրաքանչյուր անգամ տասը տարի ժամկետով:».

2) 7-րդ մասում «ձևակերպման» բառից հետո լրացնել «, լրացման, ներկայացման» բառերը:

Հոդված 11. Օրենքի 21-րդ հոդվածի՝

1) վերնագրում և ամբողջ հոդվածում «հայտարարումը» բառը փոխարինել «ճանաչումը» բառով՝ համապատասխան հոլովաձևերով.

2) 1-ին մասի 1-ին կետում «հաշված՝ հինգ տարի» բառերը փոխարինել «հաշված՝ երեք տարի» բառերով, իսկ «նախորդող հինգ տարի» բառերը՝ «նախորդող երեք տարի» բառերով:

3) 1-ին մասի 3-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

«3) ապրանքային նշանի իրավատիրոջ կողմից անմիջականորեն կամ նրա համաձայնությամբ ապրանքների կամ ծառայությունների նկատմամբ ապրանքային նշանի օգտագործումը կարող է սպառողին մոլորության մեջ գցել, մասնավորապես այն ապրանքների և (կամ) ծառայությունների տեսակի հարցում, որի համար այն գրանցված է, կամ ապրանքների և (կամ) ծառայությունների որակի, աշխարհագրական ծագման, կամ ապրանքն արտադրողի (ծառայություն մատուցողի) հարցերում:».

~~6)~~ 4) 3-րդ մասում «ուժով» բառը փոխարինել «հիման վրա» բառերով.

Հոդված 12. Օրենքի 26-րդ հոդվածի՝

1) 1-ին մասում «իրավատիրոջ» և «իրավատեր» բառերից հետո լրացնել համապատասխանաբար «(հայտատուի)» և «(հայտատու)» բառերը.

~~2) 6-րդ մասում «բնույթի» բառից հետո լրացնել «տեսակի» բառը, «փոխանցման հետևանքով ապրանքային նշանը» բառերը փոխարինել «փոխանցման հետևանքով ապրանքային նշանի օգտագործումը» բառերով, «ծագման» բառից հետո լրացնել «, ապրանքն արտադրողի (ծառայություն մատուցողի)» բառերը.~~

2) 6-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6. Պետական լիազոր մարմինը մերժում է իրավունքների փոխանցման գրանցումը, եթե ակնհայտ է, որ փոխանցման հետևանքով ապրանքային նշանի օգտագործումը կարող է հանրությանը մոլորության մեջ գցել, մասնավորապես այն ապրանքների և (կամ) ծառայությունների բնույթի, տեսակի, որակի, աշխարհագրական ծագման, ապրանքն արտադրողի (ծառայություն մատուցողի) վերաբերյալ, որոնց համար գրանցված է ապրանքային նշանը, բացառությամբ, եթե իրավունքներն ստացող կողմը համաձայնում է սահմանափակել ապրանքային նշանի գրանցումն այն ապրանքներով և (կամ) ծառայություններով, որոնց համար մոլորության մեջ գցելու վտանգը բացակայում է»:

3) 9-րդ մասից հետո լրացնել նոր 10-րդ մասով հետևյալ բովանդակությամբ՝ «10. Սույն հոդվածում նշված դիմումի ձևը, դրա լրացման, ներկայացման և քննարկման կարգը սահմանում է կառավարությունը:»:

Հոդված 13. Օրենքի 40-րդ հոդվածի՝

1) 1-ին և 5-րդ մասերում «եղանակով» բառը փոխարինել «համակարգի միջոցով» բառերով, իսկ 1-ին մասում «իր ներկայացուցչի միջոցով» բառերից հետո լրացնել «՝ նրան տրված լիազորագրի հիման վրա» բառերը.

2) 1-ին մասից հետո լրացնել նոր 1.1 մասով հետևյալ բովանդակությամբ.

«1.1. Ներկայացուցչի լիազորագիրը պետական լիազոր մարմին ներկայացվում է հայտը ներկայացնելիս կամ այն ներկայացնելուց հետո՝ երկու ամսվա ընթացքում: Մինչև լիազորագիր ներկայացնելը ներկայացուցչի կատարած գործողությունները համարվում են չկատարված և հաշվի չեն առնվում, բացառությամբ հայտը և հայտին կցված փաստաթղթերը պետական լիազոր մարմին ներկայացնելու և պետական տուրք վճարելու գործողությունների: Նշված ժամկետում լիազորագիրը չներկայացվելու դեպքում պետական լիազոր մարմինը ծանուցագիր է ուղարկում ներկայացուցչին՝ այն ստանալու օրվանից երկամսյա ժամկետում լիազորագիր ներկայացնելու առաջարկությամբ: Նշված ժամկետում լիազորագիրը չներկայացվելու դեպքում գործավարությունն իրականացվում է հայտատուի հետ անմիջականորեն՝ հաշվի առնելով սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները:»:

3) 2-րդ մասում «այլ ներկայացուցչի միջոցով» բառերից առաջ լրացնել «Հայաստանի Հանրապետությունում հաշվառված և մշտապես բնակվող կամ գործունեության վայր ունեցող» բառերով, «այլ ներկայացուցչի միջոցով» բառերից հետո լրացնել «,եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով այլ բան նախատեսված չէ» բառերը.

4) 2-րդ մասից հետո լրացնել նոր 2.1 մասով հետևյալ բովանդակությամբ.

«2.1. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերում և սույն հոդվածի 1.1 մասով սահմանված ժամկետում արտոնագրային հավատարմատարի կամ այլ ներկայացուցչի լիազորագիրը չներկայացնելու դեպքում պետական լիազոր մարմինը ծանուցագիր է ուղարկում արտոնագրային հավատարմատարին կամ այլ ներկայացուցչին՝ այն ստանալու օրվանից երկամսյա ժամկետում լիազորագիր ներկայացնելու

առաջարկությամբ: Նշված ժամկետում լիազորագիրը չներկայացվելու դեպքում հայտը համարվում է հետ կանչված, ինչի մասին հայտատուն ծանուցվում է:».

5) 5-րդ մասում «և ներկայացման» բառերը փոխարինել «, ներկայացման և քննարկման» բառերով:

6) 6-րդ մասի 2-րդ կետում «փաստաթուղթը» բառից հետո լրացնել (լիազորագիրը)» բառը:

Հոդված 14. Օրենքի 43-րդ հոդված 7-րդ մասում 1-ին նախադասության մեջ «և հայտում» բառերը փոխարինել «և չեն ընդլայնում հայտում» բառերով, իսկ 2-րդ նախադասության մեջ «հայտում նշված ապրանքների և (կամ) ծառայությունների ցանկը ոչ նույնատիպ ապրանքներով և (կամ) ծառայություններով համալրելու անհրաժեշտություն են առաջացնում:» բառերը փոխարինել «ընդլայնում են հայտում նշված ապրանքների և (կամ) ծառայությունների ցանկը:» բառերով:

Հոդված 15. Օրենքի 45-րդ հոդվածում՝

1) 5-րդ մասից հետո լրացնել նոր 5.1-րդ և 5.2-րդ մասերով հետևյալ բովանդակությամբ.

«5.1. Եթե փորձաքննության ընթացքում պարզվում է, որ նույնական կամ սպառողների մոտ շփոթություն առաջացնելու հավանականություն պարունակող ապրանքային նշաններն ունեն նույն առաջնության թվականը, ապա պետական լիազոր մարմինն այդ մասին ծանուցում է հայտատուներին: Ծանուցագիրը ստանալու օրվանից հետո երեք ամսվա ընթացքում հայտատուները կարող են պետական լիազոր մարմին ներկայացնել իրենց դիրքորոշումը կամ հայտարկված ապրանքային նշանների հետ կապված հայտատուների միջև հարաբերությունները կարգավորող և սպառողների մոտ շփոթություն առաջացնելու վտանգը կանխող համաձայնագիր:

5.2. Սույն հոդվածի 5.1. մասի համաձայն՝ սահմանված ժամկետում հայտատուների կողմից ներկայացված դիրքորոշումները և (կամ) համաձայնագիրը պետական լիազոր մարմինն ըստ էության քննարկում է սույն հոդվածով նախատեսված ապրանքային նշանի փարձաքննության անցկացման կարգով սահմանված պահանջներին համապատասխան:»

2) 7-րդ մասում հանել «տարբերակիչ հատկություն չունեն և» բառերը, իսկ «կասկածներ առաջացնել ապրանքային նշանի պահպանության ծավալի վերաբերյալ» բառերը փոխարինել «ազդել ապրանքային նշանի գրանցման վավերականության վրա» բառերով.

3) 8-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

~~«8. Եթե սույն հոդվածի 7-րդ մասի համաձայն սահմանված ժամկետում հայտատուն հայտարարություն չի ներկայացնում նշված տարրերից հրաժարվելու մասին, ապա՝~~

~~1) պետական լիազոր մարմինը համարում է, որ հայտատուն համաձայն է ներկայացված հիմքերի հետ և մերժման այլ հիմքերի բացակայության դեպքում որոշում է ընդունում հայտում նշված բոլոր ապրանքների և (կամ) ծառայությունների համար ապրանքային նշանը գրանցելու մասին՝ նշում կատարելով նշված տարրերին ինքնուրույն պահպանություն չտրամադրելու մասին, կամ՝~~

~~2) պետական լիազոր մարմինը համարում է, որ հայտատուն համաձայն է ներկայացված հիմքերի հետ և հայտարկված ապրանքային նշանը ենթակա չէ գրանցման հայտում նշված ապրանքների և (կամ) ծառայությունների մի մասի համար, կամ հայտարարություն է ներկայացնում միայն նշված տարրերից մի մասի նկատմամբ, կամ հայտարարություն է ներկայացնում է նշված տարրերից մի մասի նկատմամբ, իսկ մյուս մասի նկատմամբ ներկայացնում է պետական լիազոր մարմնի համար անընդունելի առարկություն, կամ նշված բոլոր տարրերի կամ դրանց մի մասի նկատմամբ ներկայացնում է պետական լիազոր մարմնի~~

~~համար անընդունելի առարկություն, ապա պետական լիազոր մարմինը որոշում է կայացնում ապրանքային նշանը մասնակի գրանցելու մասին (Օրենքի 45-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ ենթակետի նման)՝ նշում կատարելով նշված տարրերին ինքնուրույն պահպանություն չտրամադրելու մասին:».~~

«8. Եթե սույն հոդվածի 7-րդ մասի համաձայն սահմանված ժամկետում հայտատուն հայտարարություն չի ներկայացնում նշված տարրերից հրաժարվելու մասին, ապա՝

1) պետական լիազոր մարմինը համարում է, որ հայտատուն համաձայն է ներկայացված հիմքերի հետ և մերժման այլ հիմքերի բացակայության դեպքում որոշում է կայացնում հայտում նշված բոլոր ապրանքների և (կամ) ծառայությունների համար ապրանքային նշանը գրանցելու մասին՝ նշում կատարելով նշված տարրերին ինքնուրույն պահպանություն չտրամադրելու մասին. կամ

2) պետական լիազոր մարմինը համարում է, որ հայտատուն համաձայն է ներկայացված հիմքերի հետ և հայտարկված ապրանքային նշանը ենթակա չէ գրանցման հայտում նշված ապրանքների և (կամ) ծառայությունների մի մասի համար, իսկ ապրանքների և (կամ) ծառայությունների մյուս մասի համար, մերժման այլ հիմքերի բացակայության դեպքում, որոշում է կայացնում հայտում նշված բոլոր ապրանքների և (կամ) ծառայությունների համար ապրանքային նշանը գրանցելու մասին՝ նշում կատարելով նշված տարրերին ինքնուրույն պահպանություն չտրամադրելու մասին»:

4) 8-րդ մասից հետո լրացնել նոր 8.1 մասով հետևյալ բովանդակությամբ.

«8.1. Եթե սույն հոդվածի 7-րդ մասի համաձայն սահմանված ժամկետում հայտատուն հայտարարություն է ներկայացնում միայն նշված տարրերից մի մասի նկատմամբ, կամ հայտարարություն է ներկայացնում նշված տարրերից մի մասի նկատմամբ, իսկ մյուս մասի նկատմամբ ներկայացնում է պետական լիազոր մարմնի համար անընդունելի առարկություն, կամ նշված բոլոր տարրերի կամ դրանց մի մասի նկատմամբ ներկայացնում է պետական լիազոր մարմնի համար անընդունելի առարկություն, ապա պետական լիազոր մարմինը, մերժման այլ հիմքերի բացակայության դեպքում, որոշում է կայացնում ապրանքային նշանը մասնակի գրանցելու մասին՝ նշում կատարելով նշված տարրերին ինքնուրույն պահպանություն չտրամադրելու մասին:».

~~4)~~ 5) 12-րդ մասից հետո լրացնել նոր 12.1 մասով հետևյալ բովանդակությամբ.

«12.1. Հայտի ըստ էության փորձաքննության, կրկնական փորձաքննության վարչական վարույթները կարող են կասեցվել, հայտատուի դիմումի հիման վրա, եթե մերժման հիմք հանդիսացող մեկ այլ մտավոր սեփականության օբյեկտի նկատմամբ իրավունքների վիճարկման դիմում կամ հայց է ներկայացվել համապատասխան իրավասու պետական կամ դատական մարմին՝ մինչև տվյալ վարչական վարույթով կամ դատական գործով վերջնական որոշման կամ դատական ակտն ուժի մեջ մտնելը: Դիմումի քննարկումը վերսկսվում է դրա կասեցման հիմքերի վերանալուց հետո:».

~~5)~~ 6) 13-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«13. Ապրանքային նշանի գրանցումը չի կարող մերժվել առանց հայտատուին հնարավորություն ընձեռելու հետ կանչել կամ փոփոխություններ կատարել հայտի մեջ կամ փաստարկներ ներկայացնել ապրանքային նշանի գրանցման օգտին, ինչի մասին պետական լիազոր մարմինը ~~եռօրյա ժամկետում~~ ծանուցում է հայտատուին: Ծանուցումը ստանալու օրվանից երկամսյա ժամկետում հայտատուն կարող է հետ կանչել կամ փոփոխություններ կատարել հայտի մեջ կամ փաստարկներ ներկայացնել ապրանքային նշանի գրանցման օգտին: Ծանուցման պատասխանը պետական լիազոր մարմինը քննարկում է այն

ստանալու օրվանից երկամսյա ժամկետում: Ծանուցման պատասխան չստանալու կամ ժամկետին չստանալու դեպքում, պետական լիազոր մարմինը որոշում է կայացնում ապրանքային նշանի գրանցումը մերժելու կամ մասնակի գրանցելու մասին:»:

Հոդված 16. Օրենքի 47-րդ հոդվածի՝

1) 3-րդ մասի 2-րդ կետի «:» նշանը փոխարինել «կամ» բառով և նույն մասը լրացնել նոր 3) ենթակետով հետևյալ խմբագրությամբ.

«3) «ապրանքային նշանի հայտով գործավարությունը շարունակելու մասին:»

~~1)~~ 2) 5-րդ մասում «վեցամսյա» բառը փոխարինել «երկամսյա» բառով:

~~2)~~ 3) 5-րդ մասից հետո լրացնել նոր 6-րդ մասով հետևյալ բովանդակությամբ.

«6. Բողոքարկման խորհրդում ապրանքային նշանի գրանցումը մերժելու կամ մասնակի գրանցելու մասին որոշման դեմ բողոքի քննարկման վարչական վարույթը կարող է կասեցվել, հայտատուի դիմումի հիման վրա, եթե մերժման հիմք հանդիսացող մեկ այլ մտավոր սեփականության օբյեկտի նկատմամբ իրավունքների վիճարկման դիմում կամ հայց է ներկայացվել համապատասխան իրավասու պետական կամ դատական մարմին՝ մինչև տվյալ վարչական վարույթով կամ դատական գործով վերջնական որոշման կամ դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելը: Բողոքի քննարկումը վերսկսվում է դրա կասեցման հիմքերի վերանալուց հետո:»:

Հոդված 17. Օրենքի 51-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի 1-ին կետում «գրանցումը մերժելու» բառերը փոխարինել «գրանցումը հայտում նշված բոլոր ապրանքների և (կամ) ծառայությունների կամ դրանց մի մասի համար մերժելու» բառերով.

2) 1-ին մասի 2-րդ կետում «գրանցման» բառը փոխարինել «գրանցումը հայտում նշված բոլոր ապրանքների և (կամ) ծառայությունների կամ դրանց մի մասի համար մերժելու» բառերով:

Հոդված 18. Օրենքի 52-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի 1-ին կետում «ազգանվան» բառից հետո լրացնել «, կամ անվանման» բառերը.

2) 2-րդ մասում լրացնել նոր նախադասություն հետևյալ բովանդակությամբ. «Սույն մասով սահմանված դրույթը չի կիրառվում սույն հոդվածի 1-ի մասի 2-րդ կետով նախատեսված հայտատուի ներկայացուցչի փոփոխության նկատմամբ:».

3) 2-րդ մասից հետո լրացնել նոր 2.1-րդ մասով հետևյալ բովանդակությամբ.

«2.1. Ներկայացուցչի փոփոխություն չի համարվում հայտի քննարկմանը կամ գրանցմանը վերաբերող առանձին գործողություն կատարելու համար հայտատուի կամ իրավատիրոջ կողմից տրված լիազորագրով այլ ներկայացուցիչների (ներկայացուցչի) նշանակումը:».

4) 8-րդ մասից հետո լրացնել նոր 9-րդ մասով հետևյալ բովանդակությամբ.

«9. Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, ~~և~~ 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված փոփոխությունների մասին պետական լիազոր մարմնին չտեղեկացնելու դեպքում հետագայում ներկայացված հայտերի կամ դիմումների քննարկման ընթացքում հայտատուին կամ դիմումատուին ծանուցվում է ներկայացված հայտին կամ դիմումին առնչվող ապրանքային նշանների գրանցումներին վերաբերող՝ համապատասխան պետական գրանցամատյանում նման փոփոխությունների կատարման անհրաժեշտության մասին: Ծանուցման ստացման օրվանից երկամսյա ժամկետում անհրաժեշտ է ներկայացնել դիմում

համապատասխան փոփոխություններ կատարելու համար: Նշված ժամկետում դիմում չներկայացնելու դեպքում ապրանքային նշանի գրանցումը մերժվում է կամ դիմումները համարվում են հետ կանչված:»:

Հոդված 19. Օրենքի 55-րդ հոդվածի 4-րդ մասում «43-րդ հոդվածի 2-րդ մասով,» բառերից հետո լրացնել «45-րդ հոդվածի 13-րդ մասով,» բառերը:

Հոդված 20. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից երեք ամիս հետո:

Հոդված 21. ~~**Անցումային դրույթներ**~~

1. Սույն օրենքի 9-րդ հոդվածի ~~3-րդ~~ 1-ին մասի 4-րդ կետով Օրենքի 17-րդ հոդվածի նոր խմբագրությամբ շարադրվող 2-րդ մասով սահմանված ապրանքային նշանի չօգտագործման կամ իրական օգտագործման մեջ չդրվելու երեք տարվա ժամանակահատվածը տարածվում է նաև մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը ապրանքային նշանների պետական գրանցումների վրա:

2. Սույն օրենքի 18-րդ հոդվածի 4-րդ կետը տարածվում է նաև մինչև սույն օրենքը ուժի մեջ մտնելը գրասենյակ ներկայացված հայտերի կամ դիմումների վրա, որոնցով գործավարությունը ավարտված չէ:

3. Սույն օրենքի ընդունումից հետո՝ վեց ամսվա ընթացքում, Կառավարությունն ընդունում է սույն օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված կարգը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-463-06.12.2022-ՏԵ-011/0) ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-463[1]-06.12.2022-ՏԵ-011/0) ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	Կառավարություն	**Նախագծի 1-ին հոդված** ի 2-րդ կետ	Առաջարկում ենք Նախագծի 1-ին հոդվածի 2-րդ կետի «Միության ապրանքային նշան» հասկացության մեջ «(այսուհետ՝ ապրանքներ)» բառերը լրացնել «աշխատանքների» բառից հետո, քանի որ այն վերաբերում է ապրանքներին և աշխատանքներին:	Ընդունվել է: Կատարվել են փոփոխություններ:	Ընդունվել է:
2.	Կառավարություն	Նախագծի 4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ	Առաջարկում ենք Նախագծի 4-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվող Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «7) բաղկացած է կամ պարունակում է կեղծ և (կամ) սպառողներին մոլորության մեջ գցող տվյալներ՝ ապրանքի արտադրության կամ ծառայության մատուցման ժամանակի, ապրանքի կամ ծառայության տեսակի, բնույթի, որակի, քանակի, ստեղծման նպատակի, արժեքի, աշխարհագրական ծագման կամ ապրանքն արտադրողի (ծառայություն մատուցողի) վերաբերյալ հարցերում»: Այս փոփոխությունը պայմանավորված	Ընդունվել է: Կատարվել են փոփոխություններ:	Ընդունվել է:

			է նրանով, որ «բնույթը» կարող է վերաբերել նաև ծառայությանը:		
3.	Կառավարություն	Նախագծի 4-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ	Առաջարկում է Նախագծի 4-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվող Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. ««13) բաղկացած կամ պարունակում է՝ ա) գինիների կամ այլ ալկոհոլային խմիչքների նույնականացման համար նախատեսված աշխարհագրական նշում, պայմանով, որ ապրանքային նշանի գրանցման հայտը ներկայացվում է ավելի ուշ, քան աշխարհագրական նշման կամ ծագման տեղանվան գրանցման հայտը այն դեպքերում, երբ ապրանքները չեն ծագել տվյալ աշխարհագրական վայրից, նույնիսկ, եթե նշվում է ապրանքների իրական ծագումը, կամ աշխարհագրական նշումն օգտագործվում է թարգմանաբար կամ «տեսակ», «տիպ», «ոճ», «նմանակում» և այլ նման արտահայտությունների զուգակցմամբ.». կամ բ) նշում, որը նույնական կամ շփոթելու աստիճան նման է Հայաստանի Հանրապետության տարածքում պահպանվող աշխարհագրական նշմանը, ծագման տեղանվանը կամ երաշխավորված ավանդական արտադրանքին այն դեպքերում, երբ ապրանքները չեն ծագել տվյալ աշխարհագրական	Ընդունվել է: Կատարվել են փոփոխություններ:	Ընդունվել է:

			վայրից, նույնիսկ, եթե նշվում է ապրանքների իրական ծագումը, կամ աշխարհագրական նշումն օգտագործվում է թարգմանաբար կամ «տեսակ», «տիպ», «ոճ», «նմանակում» և այլ նման արտահայտությունների զուգակցմամբ.»: Այս փոփոխությունը պայմանավորված է հետևյալով. 1) Նախագծի համաձայն որպես ապրանքային նշաններ չեն կարող գրանցվել այն նիշերը, որոնք ՀՀ տարածքում պահպանվող աշխարհագրական նշումներ են կամ ներառում են ՀՀ տարածքից դուրս օգտագործվող աշխարհագրական նշումներ: Նման մոտեցումն ամբողջովին հակասում է աշխարհագրական նշումների պահպանության տրամաբանությանն ու փիլիսոփայությանը: Ընդհանրապես մտավոր սեփականության որևէ օբյեկտի պահպանությունը ենթադրում է տվյալ օբյեկտի նկատմամբ դրա իրավատիրոջ բացառիկ իրավունք, որը տվյալ օբյեկտի օգտագործման և երրորդ անձանց կողմից դրա՝ առանց իր թույլտվության օգտագործումն արգելելու իրավունք է: Հետևապես աշխարհագրական նշումն իր ապրանքային նշանում կարող է օգտագործել դրա իրավատեր հանդիսացող սուբյեկտը (տես «Աշխարհագրական նշումների մասին» օրենքի 39-րդ հոդվածը): Պետք է նկատի ունենալ նաև, որ մտավոր սեփականության իրավունքը սահմանափակվում է տարածքով և		

			գործողության ժամկետով: Սակայն Նախագծում նշված կետից հետևում է, որ որևէ երկրում օգտագործման մեջ գտնվող աշխարհագրական նշման պահպանությունն ըստ էության գործում է նաև ՀՀ տարածքում, ինչը կնշանակի, որ նշված կետով Հայաստանի Հանրապետությունն անուղղակի պահպանություն է տրամադրում այլ երկրների աշխարհագրական նշումներին, որն անընդունելի է: 2) Նախագծի նույն կետի բ) ենթակետից պարզ չէ, թե ինչ ասել է՝ «հիշեցնում է» բառը և ի՞նչ կարգով է որոշվում այլ երկրում դրա օգտագործման մեջ գտնվելու հարցը: Տվյալ դեպքում խոսքը բացառապես կարող է վերաբերել միայն սահմանված կարգով գրանցման հիման վրա պահպանվող աշխարհագրական նշումներին, քանի որ միայն որպես աշխարհագրական նշում համապատասխան գրանցման հիման վրա է ամրագրվում այն փաստը, որ դա բնութագրում է ապրանք, որի յուրահատուկ որակը, համբավը կամ այլ բնորոշ հատկանիշները հիմնականում պայմանավորված են տվյալ աշխարհագրական ծագմամբ, որը արտադրվել և (կամ) վերամշակվել և (կամ) պատրաստվել է տվյալ աշխարհագրական վայրում: Մնացած դեպքերում խոսքը կարող է գնալ միայն ապրանքի ծագման վայրի մասին, որի հետ կապված՝ ապրանքային նշանների գրանցման		

			հարցերը կարգավորվում են «Ապրանքային նշանների մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով: 3) Ինչ վերաբերում է ծառայությունների մատուցման հիշատակմանը որպես աշխարհագրական նշմամբ մակնշվող «արտադրանք», ապա, եթե ծառայությունները պայմանավորված լինեն տվյալ տարածքի առանձնահատկություններով, միևնույն է այն որևէ կերպ չի կարող իրականացվել այլ վայրում: Պետք է նկատի ունենալ, որ և՛ «Աշխարհագրական նշումների մասին» օրենքը, և՛ ԹՐԻՓՍ համաձայնագիրը որևէ կերպ չեն տարածվում ծառայությունների նկատմամբ, դրանք բացառապես վերաբերում են միայն ապրանքներին: 4) Նախագծի նույն կետի գ) ենթակետից հասկանալի չէ, թե ինչ է նշանակում «հայկական ծագում ունեցող տեղանուն» կամ «հայկական ծագում ունեցող աշխարհագրական նշում» արտահայտությունները: Բացի դրանից, եթե առաջարկվող 13-րդ կետը չի տարածվում «հայկական ծագում ունեցող տեղանունների, ինչպես նաև հայկական ծագում ունեցող աշխարհագրական նշումների, երաշխավորված ավանդական արտադրանքի անվանումների և կոլեկտիվ նշանների նկատմամբ», դա կնշանակի, որ դրանք ներառող կոլեկտիվ նշանները կարող են գրանցվել առանց որևէ		

			խոչնդոտի, ինչն այդպես լինել չի կարող, քանի որ նախ՝ կոլեկտիվ նշանը որպես տնտեսավարող սուբյեկտների որևէ միության ապրանքային նշան, օրենքով սահմանված կարգով կարող է փոխակերպվել որևէ անձի ապրանքային նշանի, այսինքն՝ դա ևս ապրանքային նշան է:		
4.	Կառավարություն	Նախագծի 5-րդ հոդվածի 1-ին կետ	Նախագծի 5-րդ հոդվածի 1-ին կետը առաջարկում ենք շարադրել հետևյալ խմբագրությամբ. «1-ին մասի 1-ին կետում «որը գրանցված է» բառերից հետո լրացնել՝ «(Հայաստանի Հանրապետությունում իրավական պահպանություն է տրամադրված)» բառերով»: Առաջարկվող փոփոխությունը պայմանավորված է նրանով, որ Նախագծով առաջարկվող փոփոխությունը հետագայում կարող է տարընթերցումների հանգեցնել, քանի որ հնարավոր է, որ Հայաստանի Հանրապետությունում պահպանություն ստացած լինի, սակայն տվյալ պահին դադարեցված լինի դրա պահպանությունը: Այս պարագայում դա ապրանքային նշանի գրանցման մերժման հիմք լինել չի կարող:	Ընդունվել է: Կատարվել են փոփոխություններ:	Ընդունվել է:
5.	Կառավարություն	Նախագծի 5-րդ հոդվածի 5-րդ մաս	Նախագծի 5-րդ հոդվածի 5-րդ մասը առաջարկում ենք շարադրել հետևյալ խմբագրությամբ. «5) նույնական կամ նման է Հայաստանի Հանրապետությունում պահպանվող աշխարհագրական նշմանը, ծագման	Ընդունվել է: Կատարվել են փոփոխություններ:	Ընդունվել է:

			տեղանվանը կամ երաշխավորված ավանդական արտադրանքին, և գրանցման է ներկայացվել այնպիսի ապրանքների համար, որոնք նույնական կամ նույնատիպ են այն ապրանքներին, որոնց համար գրանցված է (պահպանվում է) աշխարհագրական նշումը, ծագման տեղանունը կամ երաշխավորված ավանդական արտադրանքը, բացառությամբ այն դեպքի, երբ գրանցման ներկայացված ապրանքային նշանում դրանք ներառված են որպես չպահպանվող տարրեր, և հայտը ներկայացված է աշխարհագրական նշման, ապրանքի ծագման տեղանվան կամ երաշխավորված ավանդական արտադրանքի օգտագործման իրավունք ունեցող անձի կողմից: Այլ ապրանքների համար ներկայացված այդպիսի ապրանքային նշանը ենթակա չէ գրանցման, եթե հայտարկված ապրանքային նշանի օգտագործումն անհիմն առավելությունների կհանգեցնի գրանցված աշխարհագրական նշման, ծագման տեղանվան կամ երաշխավորված ավանդական արտադրանքի բարի համբավի շնորհիվ.»: Առաջարկվող փոփոխությունն պայմանավորված է նրանով, որ Նախագծով որպես ապրանքային նշանի գրանցման մերժման հիմք առաջարկվում է սահմանել նաև Հայաստանի Հանրապետությունից դուրս օգտագործման մեջ գտնվող աշխարհագրական նշման, ծագման		

			տեղանվան և երաշխավորված ավանդական արտադրանքի անվանման առկայությունը, մյուս կողմից՝ որպես պայման նշվում է այն հանգամանքը, որ գրանցման ներկայացված ապրանքներն ու ծառայությունները պետք է լինեն նույնական կամ նույնատիպ այն ապրանքներին, որոնց համար գրանցված է աշխարհագրական նշումը, ծագման տեղանունը կամ երաշխավորված ավանդական արտադրանքը: Այսինքն՝ Նախագծով առաջարկվող դրույթով չի սահմանվում, որ դրանք պահպանվում են ՀՀ տարածքում, նույնիսկ հայտնի չէ, թե դրանք ՀՀ տարածքից դուրս պահպանվու՞մ են, թե՝ ոչ: Այսինքն, ստացվում է, որ ՀՀ-ն միակողմանիորեն ստանձնում է օտարերկրյա մտավոր սեփականության օբյեկտի իրավունքների պահպանությունը ՀՀ տարածքում: Մինչդեռ առանց օրենքով սահմանված կարգով ՀՀ-ում դրանց գրանցման, դրանց նկատմամբ իրավունքները ՀՀ տարածքում կարող են պահպանվել միայն փոխադարձության սկզբունքով՝ միջազգային պայմանագրի հիման վրա: Ինչպես նաև, ՀՀ-ում չգրանցված (չպահպանվող) Հայաստանի Հանրապետությունից դուրս օգտագործման մեջ գտնվող աշխարհագրական նշման, ծագման տեղանվան կամ երաշխավորված ավանդական արտադրանքի անվանման առկայությունը հաշվի առնվում է այնքանով, որքանով		

			դրանք ներառող ապրանքային նշանի գրանցումն ու օգտագործումը ՀՀ տարածքում կարող է մոլորության մեջ գցել սպառողին՝ համաձայն «Ապրանքային նշանների մասին» օրենքի 9-րդ հոդվածի համապատասխան դրույթների, ինչի մասին արդեն վերը նշվել է: Բացի դրանից, Նախագծի նույն կետով առաջարկվող՝ «և գրանցման է ներկայացվել այնպիսի ապրանքների համար, որոնք նույնական կամ նույնատիպ են այն ապրանքներին, որոնց համար գրանցված է աշխարհագրական նշումը, ծագման տեղանունը կամ երաշխավորված ավանդական արտադրանքը, և (կամ) հայտարկված ապրանքային նշանի օգտագործումը» արտահայտությունը չի համապատասխանում նույն կետի առաջին մասին, որտեղ խոսքը չի վերաբերում միայն գրանցվածներին: Առաջին մասում տրված են ՀՀ-ում պահպանվող և ՀՀ տարածքից դուրս օգտագործվող աշխարհագրական նշումը, ծագման տեղանունը կամ երաշխավորված ավանդական արտադրանքի անվանումը, իսկ երկրորդ մասում խոսքը վերաբերում է միայն գրանցվածներին այն դեպքում, երբ դրանց պահպանության համար գրանցումը պահպանություն տրամադրելու ձևերից մեկն է: Ինչպես նաև «Ապրանքային նշանների մասին» օրենքի 10-րդ հոդվածը վերաբերում է ապրանքային նշանի գրանցումը հարաբերական հիմքերով մերժելուն, այսինքն՝ երբ առկա են ՀՀ-ում գործող ավելի վաղ իրավունքներ,		

			որոնց խախտմանը կհանգեցնի հայտարկված նշանի գրանցումը:		
6.	Կառավարություն	Նախագծի 7-րդ հոդվածի վերնագիր, 1-ին մաս	Առաջարկում ենք Նախագծի 7-րդ հոդվածում «12-րդ հոդվածի» բառերից հետո լրացնել «Օրենքի» բառը, քանի որ նշում է կատարված 12-րդ հոդվածի մասին, սակայն հստակեցված չէ՝ ինչ իրավական ակտի համապատասխան հոդվածի մասին է խոսքը, ինչը որոշակիացման կարիք ունի՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասը, որի համաձայն՝ «Հղումները կատարվում են հստակ և ուղղակի:»: Ինչպես նաև, Նախագծի 7-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում ««սպառող» բառով» բառերից հետո առաջարկում ենք լրացնել «համապատասխան հոլովաձևերով» բառերը:	Ընդունվել է: Կատարվել են փոփոխություններ:	Ընդունվել է:
7.	Կառավարություն	Նախագծի 11-րդ հոդված	Առաջարկում ենք Նախագծի 11-րդ հոդվածում ճշգրտել կետերի թվարկման հաջորդականությունը	Ընդունվել է: Կատարվել են փոփոխություններ:	Ընդունվել է:
8.	Կառավարություն	Նախագծի 12-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ	Նախագծի 12-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված փոփոխության և լրացումների փոխարեն առաջարկում ենք «Ապրանքային նշանների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 26-րդ հոդվածի 6-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հաշվի առնելով, որ նշված կետում կատարվող փոփոխությունները շատ են:	Ընդունվել է: Կատարվել են փոփոխություններ:	Ընդունվել է:

9.	Կառավարություն	Նախագծի 13-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ	Առաջարկում ենք վերանայել Նախագծի 13-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը՝ նկատի ունենալով, որ Օրենքի 40-րդ հոդվածի 5-րդ մասում «իր ներկայացուցչի միջոցով» բառեր առկա չեն:	Ընդունվել է: Կատարվել են փոփոխություններ:	Ընդունվել է:
10.	Կառավարություն	Նախագծի 15-րդ հոդվածի 3-րդ կետ	Նախագծի 15-րդ հոդվածի 3-րդ կետն առաջարկում ենք ավելի մասնավորեցնել, լրացնել ևս մեկ 4-րդ կետ և շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ տարաբնույթ ընկալումներից խուսափելու համար. «8. Եթե սույն հոդվածի 7-րդ մասի համաձայն սահմանված ժամկետում հայտատուն հայտարարություն չի ներկայացնում նշված տարրերից հրաժարվելու մասին, ապա՝ 1) պետական լիազոր մարմինը համարում է, որ հայտատուն համաձայն է ներկայացված հիմքերի հետ և մերժման այլ հիմքերի բացակայության դեպքում որոշում է կայացնում հայտում նշված բոլոր ապրանքների և (կամ) ծառայությունների համար ապրանքային նշանը գրանցելու մասին՝ նշում կատարելով նշված տարրերին ինքնուրույն պահպանություն չտրամադրելու մասին. կամ 2) պետական լիազոր մարմինը համարում է, որ հայտատուն համաձայն է ներկայացված հիմքերի հետ և հայտարկված ապրանքային նշանը ենթակա չէ գրանցման հայտում նշված ապրանքների և (կամ) ծառայությունների մի մասի համար, իսկ ապրանքների և (կամ)	Ընդունվել է: Կատարվել են փոփոխություններ:	Ընդունվել է:

			ծառայությունների մյուս մասի համար, մերժման այլ հիմքերի բացակայության դեպքում, որոշում է կայացնում հայտում նշված բոլոր ապրանքների և (կամ) ծառայությունների համար ապրանքային նշանը գրանցելու մասին՝ նշում կատարելով նշված տարրերին ինքնուրույն պահպանություն չտրամադրելու մասին»: 4) 8-րդ մասից հետո լրացնել նոր 8.1 մասով հետևյալ բովանդակությամբ. «8.1. Եթե սույն հոդվածի 7-րդ մասի համաձայն սահմանված ժամկետում հայտատուն հայտարարություն է ներկայացնում միայն նշված տարրերից մի մասի նկատմամբ, կամ հայտարարություն է ներկայացնում նշված տարրերից մի մասի նկատմամբ, իսկ մյուս մասի նկատմամբ ներկայացնում է պետական լիազոր մարմնի համար անընդունելի առարկություն, կամ նշված բոլոր տարրերի կամ դրանց մի մասի նկատմամբ ներկայացնում է պետական լիազոր մարմնի համար անընդունելի առարկություն, ապա պետական լիազոր մարմինը, մերժման այլ հիմքերի բացակայության դեպքում, որոշում է կայացնում ապրանքային նշանը մասնակի գրանցելու մասին՝ նշում կատարելով նշված տարրերին ինքնուրույն պահպանություն չտրամադրելու մասին:»: Նշված փոփոխության հետևանքով փոփոխվել են նաև նույն հոդվածի կետերի հերթականությունը:		

11.	Կառավարություն	15-րդ հոդվածի 5-րդ կետից (փոփոխված 6-րդ կետ)	Նախագծի 15-րդ հոդվածի 5-րդ կետից (փոփոխված 6-րդ կետ) առաջարկում ենք հանել «եռօրյա ժամկետում» բառերը, քանի որ նշված ժամկետը կարգավորվում է ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 18-ի N1538-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգով:	Ընդունվել է: Կատարվել են փոփոխություններ:	Ընդունվել է:
12.	Կառավարություն	Նախագծի 16-րդ հոդված	Առաջարկում ենք Նախագծի 16-րդ հոդվածում լրացնել նոր 1) կետ հետևյալ խմբագրությամբ. «1) 3-րդ մասը լրացնել նոր3) ենթակետով հետևյալ խմբագրությամբ. «3) «կամ ապրանքային նշանի հայտով գործավարությունը շարունակելու մասին:»: Նշված փոփոխությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ «Հայաստանի հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհրդում բողոքների, դիմումների և առարկությունների քննարկման» կարգով նշված կարգավորումը առկա է, սակայն բացակայում է «Ապրանքային նշանների մասին» օրենքում:	Ընդունվել է: Կատարվել են փոփոխություններ:	Ընդունվել է:
13.	Կառավարություն	Նախագծի 18-րդ հոդվածի 4-րդ կետ	Նախագծի 18-րդ հոդվածի 4-րդ կետում «4-րդ» թվից հետո առաջարկվում է լրացնել «5-րդ» թիվը, քանի որ Նախագծով առաջարկվող փոփոխությունը վերաբերում է նաև այդ կետին:	Ընդունվել է: Կատարվել են փոփոխություններ:	Ընդունվել է:

14.	Կառավարություն	Նախագծի 21-րդ հոդվածի վերնագիր	Նախագծի 21-րդ հոդվածի վերնագիրն առաջարկում ենք հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասում սահմանված իրավադրույթը, այն է՝ «Օրենսդրական ակտի հոդվածները ունենում են վերնագրեր, բացառությամբ փոփոխություն կամ լրացում նախատեսող օրենսդրական ակտերի:»:	Ընդունվել է: Կատարվել են փոփոխություններ:	Ընդունվել է:
15.	Կառավարություն	Նախագծի 21-րդ հոդվածի 1-ին մաս	Առաջարկում ենք վերախմբագրել Նախագծի 21-րդ հոդվածի 1-ին մասը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Նախագծի 21-րդ հոդվածի 1-ին մասով Նախագծի համապատասխան հոդվածին կատարված հղումը վերանայման կարիք ունի, քանի որ Նախագծի այդ կետում երեք տարվա ժամանակահատվածի առնչությամբ սահմանված կարգավորում առկա չէ:	Ընդունվել է: Կատարվել են փոփոխություններ:	Ընդունվել է:
16.	Կառավարություն	Նախագծի 21-րդ հոդված	Նախագծի 12-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսվում է Օրենքի 26-րդ հոդվածի՝ «9-րդ մասից հետո լրացնել նոր 10-րդ մասով հետևյալ բովանդակությամբ՝ «10. Սույն հոդվածում նշված դիմումի ձևը, դրա լրացման, ներկայացման և քննարկման կարգը սահմանում է կառավարությունը:»: «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «Եթե օրենսդրական ակտով (բացառությամբ Սահմանադրության) սահմանված նորմը կարող է կատարվել միայն այդ ակտով նախատեսված	Ընդունվել է: Կատարվել են փոփոխություններ:	Ընդունվել է:

			ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունմամբ, կամ դրա կատարումն ուղղակիորեն պայմանավորված է ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունմամբ, ապա օրենսդրական ակտի անցումային դրույթներով սահմանվում են նաև՝ 1) օրենսդրական ակտի այն մասերը, որոնք գործելու են ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից. 2) ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունման նախատեսվող ժամկետը:»: Հաշվի առնելով մեջբերված դրույթը՝ առաջարկում ենք Նախագծի անցումային դրույթներում սահմանել ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունման նախատեսվող ժամկետը:		
17.	Կառավարություն	«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված	Առաջարկում ենք «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածում «Հայաստանի Հանրապետության» բառերն գրել «քաղաքացիական» բառից առաջ՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ մասը, որի համաձայն՝ «Սահմանադրական օրենք չհանդիսացող օրենսգրքի լրիվ անվանումը հիշատակելիս հետևյալ հաջորդականությամբ ներառվում են օրենքի ընդունման տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը, օրենսգրքի	Ընդունվել է: Կատարվել են փոփոխություններ:	Ընդունվել է:

			վերնագիրը և «օրենսգիրք» բառը, եթե վերնագիրը չի ներառում այն: Սահմանադրական օրենք չհանդիսացող օրենսգրքի կրճատ անվանումը հիշատակելիս նշվում է օրենսգրքի վերնագիրը և «օրենսգիրք» բառը, եթե վերնագիրը չի ներառում այն:»:		
18.	Կառավարություն	«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված	Առաջարկում ենք «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածի ««հայտարարելը» բառը փոխարինել «ճանաչել» բառով» բառերն փոխարինել ««հայտարարել» բառը համապատասխան հոլովաձևերով փոխարինել «ճանաչել» բառով համապատասխան հոլովաձևերով» բառերով:	Ընդունվել է: Կատարվել են փոփոխություններ:	Ընդունվել է: